

Հաստատված է
«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
խորհրդի թիվ «12» նիստով
խորհրդի նախագահ՝ Բ. Ասատրյան
«24» փետրվարի 2011թ.

*«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ
ԿԱՐԳ*

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երաշխիքների տրամադրման և սպասարկման կարգը (այսուհետ՝ կարգ) հանդիսանում է «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներքին իրավական ակտ, որը կարգավորում է Ընկերության կողմից իրավաբանական և անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց երաշխիքների տրամադրման և սպասարկման գործընթացում առաջացած փոխհարաբերությունները:

1.2 Երաշխիքներ տրամադրելիս Ընկերությունը առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ ակտերով, Ընկերության կանոնադրությամբ, սույն կարգով, գործադիր տնօրենի որոշումներով:

1.3 Սույն կարգի իմաստով՝

1.3.1 **Երաշխիքով** Ընկերությունը հաճախորդի (այս դեպքում՝ պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից դրամական պահանջ ներկայացնելիս:

1.3.2 **Երաշխիքի թողարկման պայմաններ.** տրամադրվող երաշխիքի առավելագույն չափը, դրույքաչափերը, արժույթը, ժամկետը, երաշխիքի պայմանների փոփոխության վճարը, սահմանում է Ընկերության գործադիր տնօրենը՝ հաշվի առնելով գոյություն ունեցող սահմանափակումները:

1.3.3 **Դիմում-հայտ** (հավելված 1). երաշխիքի տրամադրման համար Ընկերության կողմից սահմանված ձևի փաստաթուղթ է, որը լրացվում է հաճախորդի կողմից:

1.3.4 **Փաստաթղթերի ցանկ** (հավելված 2). երաշխիք ստանալու համար Ընկերության կողմից սահմանված, պահանջվող իրավական կարգավիճակի և ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ:

1.3.5 **Ապահովման միջոցներ.** Ընկերության համար ընդունելի ապահովման միջոց են հանդիսանում անշարժ գույքի գրավը, շարժական գույքի գրավը, ընկերության համար ընդունելի այլ ապահովման միջոցներ: Գրավ չի կարող լինել անշարժ գույքի մի մասը: Գրավի առարկայի գնահատումը իրականացվում անկախ գնահատողի կողմից կամ Ընկերության և գրավի առարկայի սեփականատիրոջ փոխադարձ համաձայնությամբ որոշվում է գրավի արժեքը: Ընկերության համար ընդունելի անշարժ և շարժական գույքի ապահովմամբ տրամադրվող երաշխիքի գումարը չի կարող գերազանցել ապահովման միջոցի գնահատված արժեքի **50 տոկոսը:**

Որպես լրացուցիչ ապահովություն կարող են պահանջվել հաճախորդի բաժնետերերի կամ նրանց հետ կապված անձանց երաշխավորությունները:

1.3.6 **Իրավասու մարմին՝** Ընկերության Գործադիր տնօրենը, Խորհուրդը (եթե երաշխիքի գումարը գերազանցում է 20,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը), ով իրավասու է երաշխիքների տրամադրման վերաբերյալ որոշում կայացնել:

1.3.7 **Երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթաց.** Ընկերության աշխատակիցների համակարգված գործունեությունն է՝ հաճախորդի դիմում-հայտի ընդունման, ուսումնասիրության, վարկունակության գնահատման, երաշխիքի տրամադրման, սպասարկման, դադարման գործընթացում:

1.3.8 **Վարկային մասնագետ.** Ընկերության վարկային բաժնի պատասխանատու աշխատակիցն է, ով երաշխիքի տրամադրման և սպասարկման գործընթացում պատասխանատու է հաճախորդի հետ տարվող աշխատանքների կազմակերպման և համակարգման համար:

- 1.3.9 **Հաճախորդ.** այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը դիմել է Ընկերությանը երաշխիք ստանալու խնդրանքով, որը հանդես է գալիս որպես պրինցիպալ:

2. ՏՐԱՄԱԳՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1 Ընկերությունը կարող է տրամադրել.

- 2.1.1 **Մրցույթի մասնակցության երաշխիք՝** ի ապահովումն մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (պրինցիպալի) կողմից շահառուի հանդեպ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման,
- 2.1.2 **Պայմանագրային պարտավորությունների կատարման երաշխիք՝** ի ապահովումն պատվիրատուի հանդեպ պայմանագրի կատարող կողմի ստանձնած պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման,
- 2.1.3 **Վճարման երաշխիք՝** ի ապահովումն վաճառողի հանդեպ գնորդի ստանձնած վճարային պարտավորությունների պատշաճ կատարման,
- 2.1.4 **Կանխավճարի վերադարձման երաշխիք՝** ի ապահովումն պարտավիրատուի կողմից կատարող կողմին տրված կանխավճարի վերադարձման այն դեպքում, երբ կատարող կողմը չի կատարի իր պարտավորությունները,
- 2.1.5 **Որակի երաշխիք՝** ի ապահովումն պատվիրատուի հանդեպ կատարողի կողմից որակական հատկանիշների պահպանման կամ, ի հայտ եկած թերությունների ժամանակին վերացման:

3 ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԳՐՈՒՄ

3.1 Երաշխիք ստանալու համար հաճախորդը պետք է.

- 3.1.1 Ծավալած լինի կայուն տնտեսական գործունեություն այն ոլորտում, որտեղ կիրառվելու է երաշխիքը,
- 3.1.2 Ծավալած տնտեսական գործունեությունը ունենա առնվազն վեց ամսվա պատմություն,
- 3.1.3 ունենա կայուն ֆինանսական հոսքեր, որոնք կապահովեն Ընկերության հետագայում երաշխիք նամակով ստանձնած պարտավորությունների կատարումը,
- 3.1.4 Ընկերությանը տեղեկացնի իր բոլոր բանկային հաշիվների ռեկվիզիտների մասին,
- 3.1.5 տրամադրի երաշխիքի գծով Ընկերության հնարավոր կորուստները ապահովող համապատասխան ապահովման միջոցներ, բավարարի Ընկերության կողմից սահմանած այլ պահանջների և չափանիշների:

3.2 Երաշխիք ստանալու համար հաճախորդը Ընկերությանն է ներկայացնում դիմում-հայտ՝ Ընկերության գործադիր տնօրենի անունով, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (հավելված 1: 2): Ընկերության վարկային մասնագետի կողմից կատարվում է ստացված փաթեթի ուսումնասիրություն: Ներկայացված փաստաթղթերի հիման վրա կատարվում է հաճախորդի վարկունակության գնահատում:

3.3 Երաշխիքի տրամադրման վերաբերյալ դրական եզրակացություն կազմելու համար հիմք կարող են հանդիսանալ հաճախորդի և Ընկերության միջև առկա փոխշահավետ համագործակցությունը, հաճախորդի դրական վարկային պատմությունը, հաճախորդի՝ բանկում սպասարկվող հաշիվներում մշտական դրամական միջոցների առկայությունը, հաճախորդի կողմից ծավալած գործունեությունից ստացված եկամուտները և կայուն դրամական հոսքերը, որոնք բավարար կլինեն առաջացող պարտավորությունները ժամանակին կատարելու համար: Հաճախորդի վարկունակության գնահատման համար վարկային մասնագետը կարող է նաև կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ հաճախորդի գործունեության ծավալման վայրում:

Վարկային մասնագետի եզրակացության հիման վրա համապատասխան իրավասու մարմնի կողմից որոշում է կայացվում դիմում- հայտը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ:

3.4 Վարկային մասնագետի կողմից կազմվող եզրակացությունը պետք է առնվազն ներառի Հաճախորդի վարկունակության գնահատումը, ֆինանսական վիճակի վերլուծությունը:

3.5 Երաշխիքի տրամադրումը Ընկերության կողմից մերժվում է, եթե Ընկերության սուբյեկտիվ գնահատականով երաշխիքի համար դիմող անձը չի տիրապետում իր պարտավորությունները կատարելու համար բավարար ռեսուրսների (ֆինանսական, տեխնիկական, մարդկային կամ այլ ռեսուրսների):

3.6 Տրամադրվող երաշխիքի գումարի առավելագույն չափը սահմանափակվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտի պահանջով և երաշխիքի թողարկման պայմաններով:

3.7 Տրամադրվող երաշխիքի ժամկետը պայմանավորված է գործարքի ժամկետով և հաճախորդի վարկունակությամբ՝ չգերազանցելով **2 տարին**:

3.8 Երաշխիքի տրամադրման վերաբերյալ դրական կամ բացասական որոշումը Ընկերության կողմից ընդունվում է հնարավորինս արագ ժամկետում, ոչ ուշ քան հաճախորդի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ներկայացման օրվանից **3 օրացուցային օրվա ընթացքում**:

3.9 Իրավասու մարմնի դրական որոշումից հետո Ընկերության կողմից լիազորված անձը (անձինք) ապահովում է գործարքին առնչվող, նոտարական վավերացում պահանջող անհրաժեշտ պայմանագրերի նոտարական կարգով վավերացումը և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման կազմակերպումը:

3.10 Ընկերությունը գրավի իրավունքի պետական գրանցումը հաստատող վկայականը (եթե այդ իրավունքը ենթակա է պետական գրանցման), պայմանագրով և երաշխիքի թողարկման պայմաններով սահմանված համապատասխան վճարումները ստանալուց հետո՝ պարտավորվում է **3 բանկային օրվա ընթացքում տրամադրել երաշխիքը**:

3.11 Երաշխիքի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման դեպքում, դիմում-հայտը, հաճախորդի ներկայացրած փաստաթղթերը (անհրաժեշտության դեպքում), ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստրի և/կամ վարկային բյուրոյի պատասխանը, եզրակացությունները պահվում են Ընկերությունում:

3.12 Իրավասու մարմնի դրական որոշումից հետո Ընկերության վարկային մասնագետի կողմից կազմվում է վարկային գործ, որը պահվում է Ընկերության այդ նպատակով առանձնացված պահարանում:

4 ԵՐԱՇԽԻՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

4.1 Երաշխիքը տրամադրվում, սպասարկվում և մարվում է համաձայն նախապես կնքվող երաշխիքի պայմանագրի, իսկ գրավի առկայության դեպքում՝ նաև գրավի պայմանագրի:

4.2 Երաշխիքի սպասարկման համար Ընկերությունը հաճախորդից գանձում է դրանց սպասարկման համար վճարներ, որոնք նախատեսված են Ընկերության կողմից հրապարակվող երաշխիքի թողարկման պայմաններով:

4.3 Ընկերության և Հաճախորդի միջև կնքվում են երաշխիքի տրամադրման և գրավի առկայության դեպքում, նաև նրա անբաժանելի մասը հանդիսացող գրավի պայմանագիր:

4.4 Երաշխիքի հաշվառումը սկսվում է Ընկերության կողմից հաճախորդին երաշխիք տալու, հաճախորդի հետ երաշխիքի պայմանագիր կնքելու պահից, եթե երաշխիքով այլ բան նախատեսված չէ:

4.5 Բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով պարտավորությունը դադարում է՝

4.5.1 երաշխիքով սահմանված ժամկետի ավարտով,

4.5.2 Բենեֆիցիարի (անձ, որին ներկայացվում է երաշխիքը) կողմից մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը գրավոր պահանջ ներկայացնելիս՝ Ընկերության կողմից երաշխավորված գումարը վճարելով,

Բենեֆիցիարի կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս՝ Ընկերության կողմից երաշխավորված գումարը վճարելու դեպքում այդ գումարի չափով ձևակերպվում է դեբիտորական պարտք՝ տարեկան կիրառելով ժամկետանց դառնալու օրվա համար այդ օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, եթե երաշխիքի տրամադրման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.5.3 Բենեֆիցիարի կողմից՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու և երաշխիքը Ընկերությանը վերադարձնելու հետևանքով,

4.5.4 Բենեֆիցիարի կողմից՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու հետևանքով, Ընկերությանը պարտավորություններից ազատելու մասին գրավոր դիմում տալու միջոցով:

Եթե Ընկերությանը հայտնի է դարձել երաշխիքը դադարելու մասին, ապա այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի հաճախորդին:

4.6 Եթե աշխատանքների կատարումը, որի համար տրամադրված է երաշխիք նամակը իր մեջ ներառում է փուլեր, երաշխիքի տրամադրման պայմանագրով կարող է նախատեսվել երաշխիքի գծով Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների նվազեցում, երաշխավորվողի կողմից երաշխիքը ստացող կազմակերպությունից աշխատանքների կատարման համապատասխան փուլի ավարտը հավաստող փաստաթղթի ներկայացման պայմանով: Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների նվազեցման հետ միաժամանակ հաճախորդը ազատվում է երաշխիք նամակի գծով կատարվող վարձավճարներից (տոկոսագումարներից) սահմանված լինելու դեպքում:

4.7 Գրավի ապահովվածությամբ տրամադրված երաշխիքի գծով առկա պարտավորությունների ամբողջությամբ կատարվելուց հետո անհրաժեշտության դեպքում հաճախորդին համապատասխան տեղեկանք է տրվում պարտավորությունների կատարման վերաբերյալ:

5 ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը ուժի մեջ է մտնում հաստատման հաջորդ օրվանից: Կարգում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն Ընկերության Խորհրդի որոշմամբ: Սույն կարգի դրույթներից տարբերվող որոշումներն ընդունվում են Ընկերության Խորհրդի որոշմամբ:

Սույն կարգին կից հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:

ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՍՊՐՏԱՆ ԴԻՍՏՐԻԿՆԵՐ - ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել Երաշխիք ստորև նշված պայմաններով.

1. Ընդհանուր տեղեկություններ հաճախորդի վերաբերյալ

Հաճախորդի անվանումը	
Հաճախորդի գործունեության հասցեն	
Հաճախորդի իրավաբանական հասցեն	
Հեռախոսահամարներ	
Գործունեության տեսակը	
Ղեկավարներ	1. տնօրեն՝ 2. Գլխավոր հաշվապահ՝ 3. Այլ՝
Բանկային հաշիվներ	
Պահանջվող երաշխիքի գումար, գործողության ժամկետ	
Բենեֆիցիար	
Երաշխիքի նպատակը	

2. Ապահովման միջոցներ

2.1. Գրավ

Անվանում	Գտնվելու վայր (հասցե)	Գրավի սեփականատիրոջ անվանում/անուն	Գույքի պարամետրեր

3.3 Բանկերից (այլ կազմակերպություններից, անձանցից) ստացված վարկեր (փոխառություններ)

Բանկի (կազմակերպության, անձի) անվանում	Տրված վարկի գումար	Վարկի մնացորդ հայտը լրացնելու օրվա դրությամբ	Վարկի մարման վերջնական ժամկետ	Այլ մանրամասներ

4. Շրջանառություն

Եկամուտների ստացման աղբյուրները՝	Նախորդ տարվա ընթացքում ստացված եկամուտների (շրջանառության) ընդհանուր գումարը	Տվյալ տարվա սկզբից մինչև հայտը լրացնելու ամիսը ստացված եկամտի (շրջանառության) ընդհանուր գումարը

Սույնով հաստատում եմ, որ երաշխիքների տրամադրման պայմաններին ծանոթացել եմ, դիմում-հայտում բերված տվյալները ճիշտ են ու արժանահավատ:

ԴԻՍՈՐԴ՝ _____

Կ.Տ.

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

«___» «_____» 20__թ.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Գիմում- հայտ,
2. Իրավասու մարմնի որոշում կամ քաղվածք որոշումից՝ երաշխիք վերցնելու և գույքը գրավադրելու վերաբերյալ,
3. Հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը , հարկային կողը (ՀՀՎՀ),
4. Տեղեկանք Պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված բաժնետերերի ռեսուր վարողի կողմից,
5. Տնօրենի անձնագրի և սոց. քարտի պատճեն և անհրաժեշտության դեպքում 25% փայտասնությունը գերազանցող բաժնետերերի անձնագրի և սոց. քարտի պատճենները,
6. Սեփականատերերի, մասնակիցների, բաժնետերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ գրավոր տեղեկանք՝ անուն, ազգանունը (անվանումը), գտնվելու կամ բնակվելու հասցեն, ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները: Սույն Կարգի իմաստով փոխկապակցված են համարվում «Բանկերի և քանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձինք (անհրաժեշտության դեպքում),
7. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտեֆիկատներ, հավաստագրեր և այլն,
8. Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),
9. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),
10. Հիմնական միջոցների ցուցակ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարների մնացորդ՝ հումք, նյութեր և պատրաստի արտադրանք (ըստ անհրաժեշտության),
11. Ֆինանսական հաշվետվությունները մինչև վերջին հաշվետվու տարվա տարեկան և տվյալ տարվա սկզբից եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները՝ ընդունված ՏՀՏ-ի կողմից,
12. Մրցույթին մասնակցելու առաջարկ (մրցույթի մասնակցության երաշխիքի դեպքում) կամ հաղթող ճանաչվելու վերաբերյալ ծանուցում (կանխավճարի կամ աշխատանքների կատարման երաշխիքի դեպքում), կնքված պայմանագիր (հետավարտական երաշխիքի կամ պայմանագրում փոփոխություն կատարելու դեպքում)
13. Գործող գործակալական, իրացման, մատակարարման և այլ պայմանագրեր և համաձայնագրեր:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՈԻՄ

14. Սեփականության վկայական (բնօրինակ),
15. Սեփականության իրավունքի հիմքը (ըստ անհրաժեշտության),
16. Իրավաբանական անձի գույքի գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով

- հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կողը (ՀՀՎՀ), տեղեկանք Կանոնադրության վերջին փոփոխության, բաժնետերերի (մասնակիցների) և Գործադիր տնօրենի մասին, իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին,
17. Տեղեկանք «ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Պետական Միասնական Կադաստր»-ի տարածքային ստորաբաժանումից՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (ներկայացվում է երաշխիքի տրամադրման դրական որոշման դեպքում),
18. Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն,

ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

19. Գույքի ցանկը՝ նշելով չափի միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, և ձեռք բերման փաստաթղթերը,
20. Ավտոմեքենայի դեպքում տեխնիկական անձնագիրը (բնօրինակ),
21. Իրավաբանական անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը , հարկային կողը (ՀՀՎՀ) տեղեկանք Կանոնադրության վերջին փոփոխության, բաժնետերերի (մասնակիցների) և Գործադիր տնօրենի մասին և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին, (իրավաբանական անձանց դեպքում)
22. Կազմակերպության պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն,

*ԱՅԼ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՅ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄԷ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ*

23. Կազմակերպությունը կարող է պահանջել ապահովագրել գրավի առարկան կորստյան և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթեր:
24. Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր: